ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ 2024Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 16-ԻՑ 19-Ը

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԿՈՐԴՈԲԱ)

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Սլավիկ Սարգսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Իսպանիայի Թագավորություն (Կորդոբա), սեպտեմբերի 16-ից 19-ը, *2024թ.*

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Աշխատանքի տեսչական մարմինների Միջազգային Ասոցիացիա (IALI)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝

- 2024 թվականի հոկտեմբերի 16-ից 19-ը Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի հերթական հանդիպմանը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

- 2024 թվականի հունիսի 14-ին կայացած Գլխավոր ասամբլեայից բխող արձանագրությունները և որոշումները,
- IALI-ի զուգահեռ միջոցառումը՝ Օսակայում EXPO 2025,
- 2024-2027 թվականների տեխնիկական խորհրդատուների և տարածաշրջանային պատվիրակների նշանակումը,
- Աշխատանքի անվտանգության և առողջության կարգավորման միջազգային չափանիշները (IBOR),
- Ֆինանսական հարցեր,
- Աշխատանքի միջազգային համաժողովի վերաբերյալ հարցեր,
- Սեպտեմբերի 23-25-ը Նորվեգիայի Տրոնհայմ քաղաքում աշխատանքային տեսչության երկրորդ գլոբալ ֆորումի հաշվետվության ներկայացումը,
- Միջազգային, ինչպես նաև՝ սոցիալական գործընկերների հետ համագործակցության, աշխատանքի տեսչությունների դերի բարձրացման և այլ օրակարգային հարցեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Մի շարք առանձին հանդիպում-քննարկումներ եմ ունեցել Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (IALI) գործընկերների հետ:

Աշխատաժողովի ընթացքում ելույթով են հանդես եկել Իսպանիայի Թագավորության, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Սինգապուրի և Նորվեգիայի ներկայացուցիչները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Հանդիպման ընթացքում քննարկվել են 2024 թվականի հունիսի 14-ին կայացած Գլխավոր ասամբլեայից բխող արձանագրությունները և որոշումները, IALI-ի զուգահեռ միջոցառումը՝ Օսակայում EXPO 2025, 2024-2027 թվականների տեխնիկական խորհրդատուների և տարածաշրջանային պատվիրակների նշանակումը, Աշխատանքի միջազգային համաժողովի վերաբերյալ հարցեր, սեպտեմբերի 23-ից 25-ը Նորվեգիայի Տրոնհայմ քաղաքում Աշխատանքային տեսչության երկրորդ գլոբալ ֆորումի և սեպտեմբերի 4-ից 6-ը Թայվանում տեղի ունեցած Աշխատանքի միջազգային համաժողովի հաշվետվությունների ներկայացումը, ֆինանսական հարցեր, ինչպես նաև՝ սոցիալական գործընկերների հետ համագործակցության,աշխատանքի տեսչությունների դերի բարձրացման և այլ հարցեր:

2024-2027 թվականների տեխնիկական խորհրդատուների և տարածաշրջանային պատվիրակների նշանակման վերաբերյալ հարցերի քննարկում:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.**

Այս հանդիպումն ակնհայտորեն նպաստելու է ինչպես ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

2024 թվականի հոկտեմբերի 23

X _____

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ